ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

11 հուլիսի 2017թ. **N 298-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԴԻՏՈՐԴ ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Լուսինե Բունիաթյանի դիմում-բողոքը (այսուհետ՝ նաև դիմում), Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Բողոքաբերի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

Լուսինե Բունիաթյանի 29.06.2017թ. դիմում-բողոքը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մուտքագրվել է 2017թ. հունիսի 29-ին:

Բողոքաբերը բողոքարկում է թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 06.06.2017թ. թիվ 20-Ա որոշումը: Ներկայացված դիմում-բողոքում, մասնավորապես, նշված է.

«1. Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով 04.04.2017թ. ներկայացվել է դիմում-բողոք «Իրավունքի Եվրոպա Միավորում», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների և մի խումբ դիտորդների կողմից, որի ուսումնասիրությամբ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն ընդունել է 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումը:

2. Դիմումատուների կողմից թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումը 12.04.2017թ. բողոքարկվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որն իր 06.05.2017թ. թիվ 224-Ա որոշմամբ Լուսինե Բունիաթյանի մասով ճանաչել է անվավեր, Արամ Գակստյանի մասով դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը մերժվել է, իսկ մնացած մասով որոշումը թողել է անփոփոխ:

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ թիվ 8 տարածքային ընտրական հանձնաժողովը 06.06.2017թ. հրավիրել է նիստ և նույն օրը կայացրել թիվ 20-Ա որոշում:

4. Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 06.06.2017թ. թիվ 20-Ա որոշմամբ՝ դիտորդ Լուսինե Բունիաթյանի 04.04.2017թ. դիմում-բողոքով ներկայացված հանգամանքով, որը չի առնչվում դիտորդի իրավունքներին, վարչական վարույթի հարուցումը մերժվել է: Միաժամանակ, մերժվել է նաև Լուսինե Բունիաթյանի բողոքը՝ թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառում կատարելու պահանջի մասով:

Դիմումը ներկայացված է եղել հետևյալ բովանդակությամբ.

1 Լուսինե Սերյոժայի Բունիաթյանը 02.04.2017թ. գտնվել է 7/8 տեղամասում որպես դիտորդ: Վերջինիս կողմից դիտարկված խախտումը հետևյալն է. ինքնասոսանձվող դրոշմանիշ է փակցվել ընտրողի մոտ գտնվող ծրարում մեկից ավելի քվեաթերթիկներից մեկի վրա, և այդ վիճակում ծրարը գցվել է քվեատուփի մեջ:

Հանձնաժողովի նախագահը տեղեկացված է խախտման մասին: Դիտորդ Լուսինե Բունիաթյանը դիմել է հանձնաժողովի նախագահին, որպեսզի վերջինս խախտումը գրանցի գրանցամատյանում, սակայն հանձնաժողովի նախագահը պատասխանել է, որ հիմք չունի

գրանցամատյանում գրանցելու համար և հավելել, որ քվեաթերթիկները հաշվելիս տեղի ունեցածը նկատի կունենա:

2. Դիմում(ներ)ի քննությանն առնչվող էական փաստեր.

Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված բողոք-դիմումների քննության և/կամ նիստի, ինչպես նաև վիճարկվող որոշման ընդունման վերաբերյալ դիմողները չեն ծանուցվել տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների խախտմամբ:

2.2. Դեռևս 04.04.2017թ. թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքի կապակցությամբ դիմումատուի ներկայացուցչի կողմից թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվել միջնորդություններ՝ հետևյալ կից գրությամբ «Հաշվի առնելով այն հանգմանքը, որ մինչ այս պահը թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված բողոք-դիմումների քննության/նիստի վերաբերյալ որևէ ծանուցում չի ստացվել, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ արձանագրվել են դեպքեր, երբ նիստերը տարածքային ընտրական հանձնաժողովներում անց են կացվել առանց մեզ ծանուցելու, այդ իսկ պատճառով նախապես կից ուղարկվում են թվով չորս միջնորդություններ, որոնք վերաբերելի են սույն տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացված դիմում-բողոքներին».

Ա) թիվ 7 տարածքային ընտրական հաձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված թիվ 7/2, 7/3, 7/8, 7/15, 7/16, 7/39, 7/41, 7/42, 7/43, 7/49 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները զննելու,

Բ) թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված թիվ 7/2, 7/3, 7/8, 7/15, 7/16, 7/39, 7/41, 7/42, 7/43, 7/49 տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեսաձայնագրությունների պատճենները ստանալու և/կամ զննելու,

Գ) թիվ 7/2, 7/3, 7/8, 7/15, 7/16, 7/39, 7/41, 7/42, 7/43, 7/49 տեղամասային հանձնաժողովների անդամներին, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում տեղակայված տեղամասային հանձնաժողովների այլ անդամներին (այն տեղամասերի, որոնց վերաբերյալ ներկայացվել են բողոքներ), ինչպես նաև վերոնշյալ և բողոքներով ներկայացված այլ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը քվեարկության սենյակում և տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերին ներկա գտնված և գրանցամատյանի համապատասխան էջում գրանցված անձանց, որպես վկա հրավիրելու վերաբերյալ:

2.3. Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի վիճարկվող որոշումը մատչելի չի դարձվել դիմողներին՝ ընդհուպ մինչև 10.04.2017թ. ժամը 17:00-ի սահմանները: Ընդ որում, որոշումը մինչ այդ պահը փակցված չի եղել հանձնաժողովում որևէ տեսանելի տեղում՝ ի խախտումն ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջների, ինչի վերաբերյալ փաստը ընդունվել է նաև հանձնաժողովի նախագահի կողմից (...):

2.4. Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը նիստի ընթացքում չի ուսումնասիրել վարչական գործում առկա նյութերը, այդ թվում՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում ընդգրկված տեղամասերում դիտորդների կողմից արձանագրված խախտումների վեարբերյալ ապացույցները, որոնք ներկայացված էին էլեկտրոնային կրիչով: Որոշումը դիմումատուների ներկայացուցչին առձեռն տրամադրվել է միայն 10.04.2017թ. ժամը 17:00-ի սահմաններում:

3. Դիմում-բողոքի հիմքերը.

3.1. Վարչական վարույթի հարուցման և գրանցամատյաններում գրառում կատարելու պահանջի մասով դիմում-բողոքի մերժումը Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից պատճառաբանվել է հետևյալ հանգամանքներով.

3.1.1. դիմումատու դիտորդ Լուսինե Բունիաթյանի 04.04.2017թ. դիմում-բողոքով ներկայացված հանգամանքներով, որոնք չեն առնչվում դիտորդի իրավունքներին վարչական վարույթի հարուցումը մերժվել է՝ դիմումում վկայակոչվող իրավունքների պաշտպանությամբ դիմելու իրավունք ունեցող իրավասու սուբյեկտներ չհանդիսանալու հանգամանքով: Մասնավորապես, տարածքային ընտրական հանձնաժողովը հղում է կատարել ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ արձանագրելով, որ յուրաքանչյուր կոնկրետ սուբյեկտի իրավունք է վերապահվում բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե նման բողոքարկումը նպատակ ունի իրականացնելու բողոքարկող սուբյեկտի խախտված իրավունքի պաշտպանությունը:

Այնուհետև հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությանը, համաձայն որի՝ ոչ իրավասու անձի կողմից ներկայացված դիմումները չեն քննարկվում, դրանցով վարչական վարույթներ չեն հարուցվում և ընտրական հանձնաժողովները որոշում են կայացնում վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին, տարածքային ընտրական հանձնաժողովը որոշել է դիմողների դիմում-բողոքով վարչական վարույթի հարուցումը մերժել:

3.1.2. Իսկ Լուսինե Բունիաթյանի 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառում կատարելու պահանջի մասով՝ դիմում-բողոքի մերժումը թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը պատճառաբանել է այն հանգամանքով, որ ուսումնասիրելով դիմումը և թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, պարզել է, որ Լուսինե Բունիաթյանի կողմից ներկայացված հանգամանքների կապակցությամբ թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում գրառում առկա չէ:

Վերոշարադրյալի հաշվառմամբ, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը որպես վկա իր 06.06.2017թ. նիստին հրավիրել է թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Անահիտ Չիլինգարյանին, որի կողմից տրված բացատրություններից պարզվել է, որ դիտորդը դիմումում նշված հանգամանքներով գրառում կատարելու պահանջով որևէ անգամ իրեն չի դիմել:

Որոշմամբ նշվել է, որ դիտորդ Լուսինե Բունիաթյանը, ինչպես նաև վերջինիս ներկայացուցիչները նիստին չեն ներկայացել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հանձնաժողովը գտել է, որ թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի վերաբերյալ պահանջներն անհիմն են, բացակայում են խախտման վերաբերյալ փաստերը, հետևաբար, թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովը թույլ չի տվել ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջների խախտում:

3. Գտնում ենք, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 06.06.2017թ. թիվ 20-Ա որոշումն իրավաչափ չէ և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. Դիտորդի՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու հարցով իրավասուբյեկտության մասով.

Դիտորդին՝ տեղամասային ընտրական հանձնաժողովների գործողությունների/անգործության բողոքարկման համար ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով (օբյեկտիվ ընտրական

իրավունքի խախտումների մասով) վարույթի հարուցման մերժումը հանգեցրել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջների խախտմանը: Մասնավորապես, դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ընդհանուր բնույթի իրավախախտումների (օբյեկտիվ ընտրական իրավունքի) հիմքով դիմում-բողոքներ ներկայացնելու իրավունք չունենալու վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի հետևությունը չի բխում ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներից: Դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ եզրահանգումը կատարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածների դրույթներին հակասող և կամայական մեկնաբանություն տալու արդյունքում:

Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ **յուրաքանչյուր ոք** կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումը, գործողությունը (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր՝ ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտիվ ընտրական իրավունքը:

Այս իրավունքն իր բովանդակային ծավալում ներառում է յուրաքանչյուր քաղաքացու՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու, ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) բողոքարկելու իրավունքը: ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սուբյեկտների և նրանց վերապահված իրավունքների շրջանակի վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տրված սահմանափակ և կամայական մեկնաբանությունը ուղղակիորեն հակասության մեջ է մտնում ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 3-րդ հոդվածի դրույթների հետ, քանի որ օրենսդիր մարմին ընտրելու իրավունքով օժտված յուրաքանչյուր անձ պետք է ունենա նաև այս իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց:

Ընտրությունների ընթացքում արձանագրված իրավախախտումները իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը:

3.2. **Տարածքային ընտրական հանձնաժողովն իրավասու չէր կայացնելու վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ վիճարկվող որոշմամբ բերված հիմնավորումներով դիմողի ոչ իրավասու սուբյեկտ ճանաչելու հիմքով:**

Թիվ 7 տարածքային հանձնաժողովի կողմից վարչական վարույթ հարուցելու փուլում դիմում-բողոքում վկայակոչված իրավունքների խախտման փաստերը և դրանով պայմանավորված դիմումատուի՝ բողոքարկման սուբյեկտ լինելու հանգամանքի իրավական գնահատականը չէին կարող հանձնաժողովի քննարկման առարկա դառնալ վարչական վարույթ

հարուցելու փուլում, ինչը հանգեցրել է վերջինիս լիազորությունների սահմանազանցմանը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Դիմումատուների նյութական իրավունքների խախտումների առկայության կամ բացակայության փաստին իրավական գնահատական կարող է տրվել միայն վարչական մարմնի կողմից գործի ըստ էության քննության փուլում:

Տարածքային ընտրական հանձնաժողովը, ՀՀ ընտրական օրենսգրքի նորմերին խիստ սահմանափակ և ՀՀ Սահմանադրության 48-րդ և 50-րդ հոդվածների պահանջներին հակասող մեկնաբանություն տալու արդյունքում, խախտել է նաև դիմողի՝ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքը և զրկել նրանց վարչական մարմնի կողմից իրենց առնչվող գործով քննության իրավունքից:

3.3. Հանձնաժողովի որոշումը ոչ իրավաչափ է նաև հետևյալ պատճառաբանությամբ.

Հանձնաժողովը դիտորդ Լուսինե Բունիաթյանի դիմում-բողոքը մերժել է՝ հիմք ընդունելով միայն թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի բացատրությունները, այսինքն՝ Հանձնաժողովը դիմում-բողոքը մերժելու մասին որոշման հիքմում դրել է բացառապես տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պարզաբանումները: Գտնում ենք, որ տարածքային ընտրական հանձնաժողովը դրսևորել է ակնհայտ կողմնակալ մոտեցում՝ դիտորդի կողմից գրանցամատյանում գնահատականը արձանագրելու պահանջի ներկայացված չլինելու հանգամանքը հաստատելով միայն համապատասխան հանձնաժողովի նախագահի բացատրություններով և հրաժարվել է այլ ապացույցներ ձեռք բերելու, այդ թվում՝ այլ ականատես անձանց, օրինակ, տեղամասում ներկա գտնված վստահված անձանց, դիտորդներին, ԶԼՄ ներկայացուցիչներին, այցելուներին, հանձնաժողովի այլ անդամներին հրավիրելու և/կամ բացատրություններ վերցնելու հնարավորությունից: Դրանով իսկ խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պահանջները: Ավելին, վերոնշյալ հարցումն ուղղվել է բացառապես տեղամասային հանձնաժողովի նախագահին, ում կողմից նշված փաստի ընդունումը ուղղակիորեն հանգեցնում է վերջինիս պատասխանատվության:

Անհասկանալի է նաև տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին որպես վկա հրավիրելու հանգամանքը: Այս դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանդիսանում է դիմում-բողոքով վկայակոչված գործողությունների (անգործության) անմիջական կատարողը:

4. Պահանջը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝ խնդրում ենք

1. Անվավեր ճանաչել թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 06.06.2017թ. թիվ 20-Ա որոշումը.

ձեռնարկել միջոցներ՝

2. վերոգրյալ խախտումների կապակցությամբ արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված միջոցների ձեռնարկման ուղղությամբ.

3. խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

4. համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ.

5. հիմքերի առկայության դեպքում, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության:»:

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով դիմում-բողոքը, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովից պահանջված և ստացված վիճարկվող որոշումը և որոշման ընդունման համար հիմք հանդիսացած վարչական վարույթի նյութերը, ինչպես նաև կից ներկայացված փաստաթղթերը, պարզել է, որ դիմում-բողոքը ներկայացված է դիտորդ Լուսինե Բունիաթյանի անունից և ստորագրված է դիմումատուի լիազոր ներկայացուցիչներ Դ. Գյուրջյանի, Ե. Թումանյանցի և Ք. Գևորկյանի կողմից:

Դիմումի 1-4-րդ կետերում ներկայացվում է վիճարկվող որոշման ընդունման նախապատմությունը:

Թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրած «Իրավունքի Եվրոպա Միավորում», «Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հակակոռուպցիոն Կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների և մի խումբ դիտորդների կողմից ներկայացված 04.04.2017թ. դիմում-բողոքով թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն ընդունել է 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումը, որը դիտորդ Լուսինե Բունիաթյանի մասով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր 06.05.2017թ. թիվ 224-Ա որոշմամբ ճանաչել է անվավեր՝ մնացած մասով որոշումը թողնելով անփոփոխ:

Հիմք ընդունելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 06.05.2017թ. թիվ 224-Ա որոշումը՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է «Իրավունքի Եվրոպա միավորում», «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների և դիտորդներ՝ Լուսինե Բունիաթյանի, Մարատ Կարապետյանի, Գեղամ Պետրոսյանի, Ամալյա Սարուխանյանի, Տոմա Ասատրյանի, Տիգրան Մարիտիրոսյանի, Լուսինե Հովհաննիսյանի, Աննա Գասպարյանի, Արամ Գալստյանի, Արթուր Մաթևոսյանի դիմում-բողոքը՝ միայն դիտորդ՝ Լուսինե Բունիաթյանի մասով, և 06.06.2017թ. կայացրել իր 20-Ա որոշումը:

2. Դիմումի 1-ին կետում շարադրված են թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովին հասցեագրված դիմումում դիտորդ Լուսինե Բունիաթյանի անունից ներկայացված այնպիսի հանգամանքներ, որոնք առնչվում են 2017թ. ապրիլի 2-ին կայացած Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության օրվան և վերաբերում են թիվ 7/8 տեղամասին և որոնց մասով թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 07.04.2017թ. թիվ 11-Ա որոշումը ճանաչվել էր անվավեր:

Դիմումի 2-րդ կետում նշվում է, որ 04.04.2017թ. դիմումատուների կողմից թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել են միջնորդություններ և որպես ապացույց՝ էլէկտրոնային կրիչ, որոնց վիճարկվող որոշմամբ անդրադարձ չի կատարվել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահանջով ներկայացված թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումատուների կողմից ներկայացված միջնորդությունները քննարկվել և միաձայն մերժվել են, իսկ էլեկտրոնային կրիչն ուսումնասիրվել է:

«Դիմում-բողոքի հիմքերը» 3-րդ կետում բողոքաբերը ներկայացնում է վիճարկվող որոշման պատճառաբանություններն ու իրավական գնահատականները:

3. Դիմում-բողոքում դիմումատուն ներկայացրել է ընդհանուր բնույթի դատողություններ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները վիճարկելու իրավասուբյեկտության վերաբերյալ, մասնավորապես, նշում են, որ «Դիտորդի և դիտորդական կազմակերպության՝ ոչ իրավասու սուբյեկտ հանդիսանալու վերաբերյալ եզրահանգումը կատարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասին՝ ՀՀ Սահմանադրության 48-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածների դրույթներին հակասող և կամայական մեկնաբանություն տալու արդյունքում:»: Նաև նշվում է. «Ընտրությունների ընթացքում արձանագրված ընտրախախտումները իրենց համակցության մեջ և/կամ բնույթով կարող են ուղղակի ազդեցություն ունենալ յուրաքանչյուր ընտրողի քվեի հասցեականության վրա, ինչպես նաև յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու իրավունքի իրացման վրա առհասարակ: Ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքները՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները՝ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում: Հակառակ մեկնաբանությունը կհանգեցնի ընտրական իրավունքի էության խախտմանը:»:

Վերը նշված դատողությունների համար որպես իրավական հիմք դիմումատուն վկայակոչում է ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածը՝ շեշտադրելով օրենսդիր մարմին ընտրելու և այդ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները:

Վերոգրյալի կապակցությամբ կիրառելի է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իր մի շարք որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումը (20.10.2017թ. թիվ 67-Ա, 68-Ա, 69-Ա որոշումները, 06.05.2017թ. թիվ 218-Ա, 219-Ա, 220-Ա, 255-Ա, 256-Ա, 257-Ա որոշումները, 06.06.2017թ. թիվ 277-Ա, 278-Ա, 279-Ա, 280-Ա, 287-Ա, 289-Ա որոշումները և այլ որոշումներ), որի շրջանակներում, մասնավորապես, արձանագրվել է, որ «դատողությունն առ այն, որ «ընտրական իրավահարաբերությունների սուբյեկտ հանդիսացող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ դիտորդի և դիտորդական կազմակերպության կողմից ներկայացված դիմում-բողոքների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումների հիմքով ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների վիճարկման վերաբերյալ ենթակա են քննության վարչական վարույթի կարգով, նույն կարգով, ինչ դիտորդների սուբյեկտիվ իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքները», չի բխում ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենսդրի կողմից ներդրված տրամաբանությունից»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստել է նաև, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածում ներդրված վերոհիշյալ տրամաբանությունն արտահայտված է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածում, որը ՀՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ կիրառելի է ընտրական հանձնաժողովում վարչական վարույթի նկատմամբ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով

սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ: Համաձայն նշված օրենքի 69-րդ հոդվածի՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը: Նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ վարչական կարգով բողոք ներկայացնելու իրավունքը վերապահվում է այն անձանց, ովքեր բողոքարկման միջոցով պաշտպանում են ***իրենց*** խախտված իրավունքները:

Վերոգրյալի հաշվառմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 06.06.2017թ. թիվ 20-Ա որոշումը՝ դիտորդ Լուսինե Բունիաթյանի 04.04.2017թ. դիմում-բողոքով ներկայացված հանգամանքներով, որոնք չեն առնչվում դիտորդի իրավունքներին, վարչական վարույթի հարուցումը մերժելու մասով, իրավաչափ է:

4. Վարչական վարույթ հարուցելու փուլում դիմում-բողոքում վկայակոչված իրավունքների խախտման փաստերը և դրանով պայմանավորված դիմումատուի՝ բողոքարկման սուբյեկտ լինելու հանգամանքի իրավական գնահատականը վարչական վարույթ հարուցելու փուլում քննարկման առարկա դառնալու կապակցությամբ դիմումատուների դատողություններին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 02.05.2017թ. թիվ 194-Ա, 195-Ա որոշումները, 04.05.2017թ. թիվ 209-Ա, 210-Ա որոշումները, 06.05.2017թ. թիվ 256-Ա, 257-Ա որոշումները, 06.06.2017թ. թիվ 289-Ա, 288-Ա որոշումները և այլ որոշումներ), մասնավորապես՝ նշելով, որ վարչական վարույթի հարուցումը մերժելու դեպքում, որը որպես իրավական ինստիտուտ ընտրական հանձնաժողովներում վարչական վարույթի և վարչարարության առանձնահատկություն է հանդիսանում, կիրառելի չեն վարչական վարույթի հարուցման դեպքում վարույթի իրականացմանն ուղղված կանոնակարգումները, մասնավորապես՝ փաստական հանգամանքների քննարկման ապահովումը, լսումներ անցկացնելը, դիմումին առնչվող՝ դիմումատուների միջնորդությունները քննարկելը, ապացույցներ հետազոտելը և այլն: Փոխարենը ընտրական հանձնաժողովն իրավասու է սեփական նախաձեռնությամբ հարուցելու վարչական վարույթ և քննարկելու այն հանգամանքները, որոնք ներկայացված լինելով դիմումներով և բողոքներով՝ ընտրական հանձնաժողովի կողմից ընդունվել են որպես հաղորդումներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նաև գտել է, որ վարչական վարույթի հարուցումը մերժելու ինստիտուտի կիրառումը՝ դիմումատուի կողմից նշված տրամաբանությամբ, կիմաստազրկի այդ իրավական ինստիտուտը:

5. Դիմում-բողոքի 3.3.-րդ կետով ներկայացված պնդումն առ այն, որ «տարածքային ընտրական հանձնաժողովը դրսևորել է ակնհայտ կողմնակալ մոտեցում՝ դիտորդի կողմից գրանցամատյանում գնահատականը արձանագրելու պահանջի ներկայացված չլինելու հանգամանքը հաստատելով միայն համապատասխան հանձնաժողովի նախագահի բացատրություններով և հրաժարվել են այլ ապացույցներ ձեռք բերելու», անհիմն է, քանի որ դիմումատուն օրենքով սահմանված կարգով տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նիստի օրվա և ժամի մասին պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել նիստին, որևէ ապացույց առ այն, որ դիտորդը պահանջել է, սակայն հանձնաժողովը չի գրանցել նրա գնահատականը գրանցամատյանում, դիմումատուի կողմից չի ներկայացվել:

ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «6. Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական

հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, իսկ ընտրական հանձնաժողովը՝ իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել: Սույն մասով սահմանված կանոնները վերաբերում են նաև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին:»:

Վիճարկվող որոշմամբ նշված է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 06.06.2017թ. նիստին հրավիրվել է թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, ում կողմից տրված բացատրությունների հաշվառմամբ, ինչպես նաև «հաշվի առնելով, որ դիմումատու դիտորդ Լուսինե Բունիաթյանի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել առ այն, որ խախտումն առկա է», թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը եզրակացրել է, որ խախտում առկա չէ:

Ավելին, թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում առկա նիստի արձանագրության ուսումնասիրությամբ փաստվում է, որ մինչև որոշում կայացնելը հանձնաժողովն ուսումնասիրել է դիմումատուի կողմից էլեկտրոնային կրիչով նեկայացված նյութը:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի վիճարկվող որոշումն առ այն, որ թիվ 7/8 տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել ՀՀ ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջների խախտում, իրավաչափ է:

6. Սույն դիմում-բողոքի քննարկմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 2017թ. հունիսի 6-ի թիվ 20-Ա որոշումն իրավաչափ է հետևյալ պատճառաբանությամբ՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովն իր որոշմամբ նշել է այն բոլոր էական փաստական հանգամանքները և իրավական հիմնավորումները, որոնք հիմք են հանդիսացել ընդունելու վիճարկվող որոշումը, այն ձևակերպված է հստակ և հասկանալի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովը պահպանել է վարչական ակտին ներկայացվող «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-57-րդ հոդվածների և ՀՀ ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածների պահանջները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն դիմում-բողոքով հարուցված վարչական վարույթով առկա փաստերի ուսումնասիրմամբ հիմնավորված է համարում թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի եզրահանգումները և գտնում է, որ ենթակա է մերժման դիմում-բողոքով ներկայացված պահանջը՝ անվավեր ճանաչել թիվ 7 տարածքային ընտրական

հանձնաժողովի 06.06.2017թ. թիվ 20-Ա որոշումը, ինչպես նաև բողոքով ներկայացված բոլոր մնացած պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Լուսինե Բունիաթյանի դիմում-բողոքը մերժել՝ թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 6-ի թիվ 20-Ա որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**